Վերլուծություն

Եկամտային հարկի տարեկան հայտարարագիր ներկայացնելու կարգի վերաբերյալ

Եկամտային հարկի տարեկան հայտարարագիր պետք է ներկայացնել self-portal.taxservice.am կայքի «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգ»-ի հայտարարագրման բաժնից: ՀՀ հարկային օրենսգրքի 53-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ հարկային հաշվարկները հարկային մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով:

ՀՀ հարկային օրենսգրքի 310-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հարկ վճարողի կամ հարկային գործակալի կողմից Օրենսգրքով սահմանված հարկային հաշվարկների՝ էլեկտրոնային եղանակով ներկայացումն իրականացվում է հարկային մարմնի հետ կնքված՝ էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկների ներկայացման մասին պայմանագրի (այսուհետ՝ ԷՆՊ) հիման վրա և էլեկտրոնային թվային ստորագրության, էլեկտրոնային ծածկագրի ու գաղտնաբառի կիրառության միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ պայմանագրում նշվում են պայմանագրի առարկան և ծառայությունների մատուցման պայմանները, հարկ վճարողի կամ հարկային գործակալի կողմից էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկներ ներկայացնող լիազորված անձի անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները:

Այստեղից հետևում է, որ 2024 թվականի համար ներկայացման ենթակա եկամտային հարկի հայտարարագիրը ներկայացվում է միայն էլեկտրոնային եղանակով՝ հայտարարատու ֆիզիկական անձի կամ էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկներ ներկայացնող լիազորված անձի կողմից: Այսինքն, Օրենսդիրը նախատեսել է լիազորված անձի կողմից հարկային հաշվարկներ ներկայացնելու հնարավորություն:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Մինչդեռ, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքում եկամտային հարկի հայտարարագրի ներկայացման էլեկտրոնային համակարգում լիազորված անձի կողմից համակարգ մուտք գործելու, ստորագրելու և հանձնելու հնարավորությունը սահմանափակված է:

Հետևաբար, ստացվում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն խախտել է ՀՀ հարկային օրենսգրքի պահանջները, իրեն վերապահել է լիազորություններ, սահմանափակել է անձանց իրավունքները, Սահմանադրությամբ կամ օրենքներով դրանց սահմանման (հաստատման) լիազորությունը չունենալով։

Հաշվի առնելով վերը նշված խնդիրը, առաջարկում ենք՝ նախատեսել լիազորված անձի կողմից համակարգ մուտք գործելու, ստորագրելու և հանձնելու հնարավորություն կամ, հնարավորություն ընձեռնել եկամտային հարկի հայտարարագիրը ներկայացնել առանց էլեկտրոնային ստորագրության (հարկային մարմնի կողմից տրված գաղտնաբառով մուտք գործելու հնարավորությամբ)։

Կատարող՝

Վ.Եղոյան

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ

Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի իրավաբան

26.02.2025թ.